ԴՎԻՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԸ

Դվինը միջնադարյան Հայաստանի խոշորագույն առևտրաարհեստավորական, մշակութային և վարչական կենտրոններից էր։ Հիմնադրվելով IV—V դդ., այն դառնում է մարզպանական Հայաստանի կենտրոնը և միանգամից ընդգրկվում ժամանակի տնտեսական, քաղաքական ու մշակութային ոլորտի մեջ։ Դվինում մեծ զարգացում ապրեցին տարբեր արհեստները, առևտուրը, շինարարական գործը և այլն։ Այդ են վկայում պեղումներից հայտնաբերված բազմաթիվ իրերը և առարկաները, բացված ճարտարապետական հուշարձանները։ Դվինի արհեստների և արտադրանքի վերաբերյալ գրավոր վկայություններ են պահպանվել հայ և օտար պատմիչների մոտ։

III—VII դդ. Անդրկովկասը տնտեսական, քաղաքական և մշակութային որոշակի կապերի մեջ էր Սասանյան Իրանի հետ։ Հայաստանում այդ կապերը հանդես էին գալիս տարբեր երանգավորումներով, պահպանելով ազգային ավանդույթները։

Իրանի հետ փոխադարձ կապերը նկատելի են հատկապես սասանյան պաշտոնական հագուստի օգտագործման մեջ (տե՛ս Վասակ Սյունեցու և Սմբատ մարզպանի հագուստների նկարագրությունը Եղիշեի և Սեբեոսի մոտ), մի քանի պաշտոնական սիմվոլներում, զարդարվեստում, քանդակագործության (Պտղնիի եկեղեցու քանդակները) և զինարվեստի մեջ։

Չնայած Հայաստանը հնուց ի վեր ուներ կնքաքարերի պատրաստման որոշակի ավանդույթներ, այնուամենայնիվ վաղ միջնադարում սասանյան արվեստը իր հետքն է թողել այդ բնագավառում, առավելապես դա նկատելի է պատկերագրության մեջ։ Հայաստանում, և մասնավորապես Դվինում, կնքաքարերի գյուտերը բավականին շատ են և դրանց արտադրությունը, հավանաբար, գտնվում էր պետության հսկողության ներքո, քանի որ կնքաքարերով մատանի կրելու իրավունքը վերապահված էր սահմանափակ թվով անձնավորությունների, այդ թվում պաշտոնական անձանց։

Տնտեսական, քաղաքական և հասարակական բնագավառներում սասանյանների ազդեցության մասին են վկայում նաև կավե կնքադրոշմները, որոնք տարբեր գործարքների և փաստաթղթերի հաստատման գրավականներն էին։ Դվինում գտնվել է 41 կնքադրոշմ, որոնցից 37-ը սասանյան ժամանակաշրջանի են և թվագրվում են VI—VII դդ.։ Երեք կնքադրոշմ արաբական շրջանի են (IX դ.) և հանդիպում են առաջին անգամ։ Կնիքների վրա մեծ տեղ են գրավում տարբեր կենդանիների, թռչունների պատկերները, բուսական զարդամոտիվը, նշանները, խաչերը, որոնք, անշուշտ, կապված են պաշտամունքի հետ։ Դրանց մի մասը կրում է արձանագրություններ։

Կնքադրոշմները կնիքներով կնքված կավե փոքրիկ կիսագնդեր են կամ տափակ, կլոր զանգվածներ, պատրաստված հատուկ կավից, որոնք ունեն ճկունության բարձր հատկություն և չսրանալուց հետո խիստ պնդանում են։ Կնքադրոշմներով կնքվել են դռներ, անոթներ, վավերացվել են տարբեր բնույթի փաստաթղթեր՝ երկրի արտաքին ու ներքին հարաբերությունների հետ կապված պետական կարևոր որոշումներ, առևտրական հարաբերությունների, ինչպես նաև անհատական բնույթ կրող արտոնագրեր, անձնական նամակներ, ուղերձեր և այլն։

Կնքադրոշմների գյուտերը միջնադարյան Արևելքի տարբեր հուշարձաններում ցույց են տալիս դրանց տարածման բավականին լայն արեալը՝ Սասանյան Իրանը և նրա ենթակայության տակ գտնվող երկրները։

Աշխարհի տարբեր թանգարաններում պահպանվում են պատահական և պեղումներից հայտնաբերված սասանյան հազարավոր կնքադրոշմներ։ Ամենամեծ ժողովածուն (մոտ 500 կնքադրոշմ) գտնվել է 1934 թ. Պարսկաստանում, Շիրազից ոչ հեռու գտնվող Քասր-ի Աբու Նասր

ինակավայրի միջնաբերդի VI—VII դդ. շերտերում։ Շուրջ երկու հարյուր կնքադրոշմ է գտնվել Հյուսիսային Պարսկաստանում, Թախտ-ի Սուլեյման տաճարի պեղումների ժամանակ։ Կնքադրոշմների մի փոքրիկ ժողովածու հայտնի է Նեհավենդից (Պարսկաստան), հետախուզական պեղումների ժամանակ։

Սովետական Միությունում սասանյան առաջին կնքադրոշմները գտնվել են միջինասիական հուշարձաններում (1933 թ. Սամարղանդ, հրատարակված չեն, Թեշիկ-կալա, Ակ-Դեպե, Աշխարադ)։

Անդրկովկասում ընդհանրապես սասանյան շրջանի կնքադրոշմներ քիչ են հայտնի, չնայած այն բանին, որ կնիքների գյուտերը բավականին հաճախ են։ 1949 թ. տասներկու կնիքով մեկ կնքադրոշմ է գտնվել Մինգեչաուրի V—VIII դդ. շերտերում։ Երկու կնքադրոշմ գտնվել է Ուրբնիսիում (Վրաստան), որոնցից մեկը սասանյան է։

Հայ միջնադարյան պատմիչների մոտ բազմաթիվ վկայություններ են պահպանվել երկրի ներքին և արտաքին հարաբերությունների հետ կապված տարբեր փաստաթղթերի վավերացման, նվիրատվական և այլ բնույթի գործարքների կապակցությամբ կնիքների խաղացած դերի մասին։

Կնիքն առաջին հերթին ուժի, իշխանության և իրավունքի խորհրդանիշ է։ Կնիքով որոշվել է նրա տիրոջ զբաղեցրած սոցիալական դիրքը և դրաղմունքը հասարակության մեջ։ Պարսկական և արաբական աղբյուրներում բազմիցս հիշատակություններ կան, որ սասանյան արքունիքում քաղաքացիական, հոգևորական և զինվորական մեծապաշտոն անձնավորություններին նշանակումից առաջ տրվում էին զգեստներ, գլխազարդ, գոտի և կնքաքարով մատանի։

Հայկական աղբյուրներում հիշատակություններ կան պահպանված այն մասին, թե ովքեր են մասնակցել պաշտոնական փաստաթղթերի վավերացմանը։ Բոլոր պատմիչները նշում են, որ կնիք կրելու իրավունք ունեին առավելապես բարձրաստիճան անձինք՝ թագավորը, նախարարները և հոգևորականության վերնախավը։

Հայ և օտար միջնադարյան մատենագրության մեջ խիստ ուշագրավ վկայություններ են պահպանվել նաև կնիք-մատանիների ձևերի վերաբերյալ իրավական տեսանկյունից։ Պատմիչների մոտ առանձնակի հիշատակված են թագավորական կնիքները։ Դրանք բոլորն էլ հանդես են գալիս առաջին հերթին «վարազագիր մատանեաւ» ձևով։ Հավանաբար, վարազի պատկերով մատանիները սասանյան և հայ թագավորների պաշտոնական կնիքներից մեկն էին։ Հիշատակվում են նաև «արքունական», «սովորական» մատանիները, որոնք հավանաբար անձնական կնիքներ էին։ Նախարարական տները պետական նշանակություն ունեցող փաստաթղթերի վավերացման ժամանակ օգտագործում էին պաշտոնական կնիքներ։ Այս մատանիները կոչվել են «տէրունական»։ Անձնական «սովորական» մատանիները օգտագործվել են նախարարության սահմաններում ներքին նշանակության փաստաթղթերի վավերացման ժամանակ։ Եվ, վերջապես, այն նախարարները, որոնք մասնակցել են երկրի կառավարմանը և ունեցել են պաշտոններ, նույնպես կրել են իշխանությունը խորհրդանշող կնիքներ։ Դրանց թվում կարող էր լինել մարզպանը, հազարապետը, ավելի վաղ՝ մարդպետը, թագադիր ասպետը և այլն։

Նույն երևույթը նկատվում է նաև եկեղեցական հիերարխիայում։ Այստեղ ևս մենք ունենք «սովորական», «տիրական», «հայրապետական», «վավերական» մատանիներ, որոնք դասդասվում են իրենց նշանակությամբ։

Կնիքների և, մասնավորապես, կնքադրոշմների վերաբերյալ հետաքրքիր վկայություններ կան պարսկական և արաբական գրավոր հուշարձաններում, որոնց քննարկումը խիստ անհրաժեշտ է վաղ միջնադարում տարբեր փաստաթղթերի վավերացման հարցերը լուսաբանելու համար։ Այս տեսանկյունից խիստ արժեքավոր են «Սասանյան դատաստանագրքի» առանձին հոդվածները, որոնք ժամանակակից են քննարկվող երևույթներին։ Այսպես. հոդվածներից մեկում ասված է, որ «ֆինանսական չինովնիկների (hamarkar) և մոգպետների (magypat) գործնական (պաշտոնական) կնիքները առաջին անգամ մտցվել են (օգտագործվել) Պերոզի որդի Կավադ արքայի հրամանով, իսկ դատավորների (dātaβar) գործնական կնիքները՝ Կավատի որդի Խոսրով արքայի հրամանով»։

Արաբ պատմիչները բավականին տպավորիչ են արտահայտվում այն մասին, թե սասանյան արքունիքում ինչպես էին քննարկվում պետական նշանակություն ունեցող գործերը և այդ գործում ինչ դեր էր խաղում պետական կնիքը։ Ալ-Բալաձորին նշում է, որ արքաներն ունեին հատուկ կնիքներ փոստի, հողերի նվիրատվության, գաղտնի գրասենյակի և այլնի համար։

X դ. արաբ պատմիչ ալ-Ջահշիյարին ներկայացնում է սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիր I-ի չորս կնիքները, որոնք օգտագործվել են զինվորական հրամանների համար «տո-

կունություն» մակագրությամբ, հարկերի, ֆինանսների և շինարարության գծով՝ «հաստատում» մակագրությամբ, փոստի՝ «աճապարանք» և դատական գործերի համար՝ «արդարություն» մակագրություններով։ Այս առումով շատ բնորոշ է ալ-Մասուդիի վկայությունը Վահրամ V-ի մեկ, Խոսրով Անուշիրվանի չորս և Խոսրով Փարվեզի ինը կնիքների վերաբերյալ։ Խոսրով Փարվեզի կնիքների առատությունը բացատրված էր դրանց կատարած տարբեր ղերերով։ Այսպես, հեծյալի պատկերով կնիքը ուղեկցվում է «աճապարանք» մակագրությամբ, արծվի պատկերով կնիքներով վավերացվում են նահանգներին ուղղված նամակները, վարազագիր կնիքով կնքվում էին մահվան դատապարտվածների վճիռները և այլն։

Սասանյան կնիքների և կնքադրոշմների վրա հաճախ են «արդարություն» մակագրությամբ օրինակներ։ Ուսումնասիրողների մեծ մասը հակված են դրանք դիտելու որպես դատական կնիքներ, որոնք կրում էին դատավորները։

Կնքադրոշմների կիրառական նշանակության հետ կապված տարբեր հարցերի ուսումնասիրության համար շատ կարևոր դեր կարող է խաղալ դրանց արտաքին տվյալների մանրամասն նկարագիրը։ Այդ հարցերը բազմաթիվ են. թվագրություն, կնիքների ձևեր, կնքվող առարկայի արտաքին հատկանիշների վերհանում, դրոշմների տեղական և ոչ տեղական բնույթը և այլն։

Դվինի կավե կնքադրոշմները գերազանցապես կլոր են, 1,5—9,0 սմ տրամագծով, հանդիպում են նաև քառակուսի, ուղղանկյուն և տձև կնքադրոշմներ, որոնք ունեն մեկական դրոշմ և մեծ մասամբ դրանց ձևերը կապված են հպվող առարկայի բնույթից և արտաքին տվյալներից։ Բոլոր կնքադրոշմներն ունեն սեղմված անցքեր թելերով ամրացնելու համար։ Խնդրո առարկա կնքադրոշմների հակառակ երեսներն ունեն հարթ մակերեսներ, որոնց վրա արտատպված են սեղմվող առարկայի նյութի արտաքին նշանները։ Պետք է ասել, որ մեր օրինակներից մի քանիսի վրա հստակ դիտվում են կտորի կամ գործվածքի և կաշվի հետքերը։

Կնքադրոշմների արտաքին նշանների քննությունը ուշագրավ է նրանց կիրառական նշանակությունը պարզելու առումով։ Բազմաթիվ կնիքներով կնքադրոշմներն իրենց վրա կրում են միայն փոկերի, պարանների և գործվածքների հետքեր։ Տվյալ դեպքում դա կարելի է բացատրել նրանով, որ դրանք ամրացվել են ոչ թե փաստաթղթերի, այլ ծավալային տեսակետից ավելի մեծ առարկաների, որոնք լրացուցիչ ամրացված են եղել փոկերով և պարաններով։ Գործվածքի հետքերը դրոշմների վրա ցույց են տալիս, որ դրանցով կնքվել են պարկեր կամ հակեր։ Վերջինս տարածված երևույթ էր հատկապես սասանյանների օրոք, հանդիպում էր նաև հետագայում՝ առևտրական գործարքների ժամանակ։ Գոգավոր մակերեսով կնքադրոշմները միայն մեկ կամ երկու կնիքով են հանդես գալիս։ Կարելի է ենթադրել, որ դրանք ամրացված են եղել կոր մակերես ունեցող առարկաների, տվյալ դեպքում դա կարող էր լինել ոլորված մագաղաթը։ Մյուս կնքադրոշմները, որոնք ունեն հարթ մակերեսներ առանց հետքի, ըստ երևույթին թելերով ամրացվել են համապատասխան փաստաթղթերին։

Կնքադրոշմների վրա եղած դրոշմներով հնարավոր է որոշել կնքաքարերի ձևերը, որոնք շատ կարևոր են թվագրության և տվյալ ժամանակաշրջանում օգտագործվող կնիքների և մատանիների առանձին ձևերի ուսումնասիրության առումով։ Դվինում հայտնաբերվել են ընդամենը 41 կնքադրոշմներ, որոնք կնքված են 178 կնիքներով։ Այդ կնիքներից 138-ը ուշ սասանյան շրջանի են, իսկ 40-ը՝ վաղ արաբական։ Կնիքների վիճակագրական մանրազնին քննությունը ձևերի տեսակետից տալիս է հետևյալ պատկերը.

Սասանյան. ձվաձև ուռուցիկ—39 հատ, ուղղանկյուն—38 հատ, շրջանաձև—34 հատ, ձվաձև հարթ—11 հատ, քառակուսի—4 հատ, շեղանկյուն—2 հատ։

Արաբական. ձվաձև ուռուցիկ—19 հատ, ձվաձև հարթ—8 հատ, շրջանաձև—6 հատ, ուղղանկյուն—5 հատ, քառակուսի—2 հատ։

Ինչպես նկատում ենք, սասանյան և վաղ արաբական կնիքների մեջ գերակշռություն են կազմում ձվաձև ուղղանկյուն և շրջանաձև կնիքները։ Ձվաձև կնիքները արաբական շրջանում մյուսների համեմատ գերակշռություն են կազմում։ Հարթ մակերեսներով սասանյան դրոշմները արված են կիսաշրջանաձև քարե կնիքներով, որոնք լայն տարածում ունեին այդ շրջանում, իսկ հետագա դարաշրջաններում իսպառ դուրս են գալիս գործածությունից, փոխարինվելով ավելի բարդ ձևերով։ Քառակուսի, շեղանկյուն կնիքները սասանյան շրջանում շատ քիչ են հանդիպում։

Դվինի պեղումներից հայտնաբերված տարբեր կնքադրոշմների վրա հանդիպում են միևնույն կնիքների կրկնություններ։ Այս հետաքրքիր երևույթը բնորոշ է ոչ միայն Դվինին։ Վ. Լուկոնինը նշում է, որ տարբեր վայրերից հայտնաբերված սասանյան կնքադրոշմների վրա հաճախ հան-

դիպում են միևնույն կնիքների արտատպությունները, միևնույն անձանց անուններով. կան դեպքեր, երբ նույն դրոշմը կրկնվում է 2—3 անգամ։ Կնքադրոշմների վրա միևնույն կնիքների կրկնությունը հայտնի է նաև ավելի վաղ նյութերում։ Նույն պատկերը դիտվում է նաև Քասր-ի Աբու Նասրից և Թախտ-ի Սուլեյմանից գտնված որոշ օրինակների վրա։

Բոլոր ուսումնասիրողները ճիշտ նկատել են, որ այս երևույթը կարևոր նշանակություն ունի կնիքների ժամանակը որոշելու համար։ Սակայն պետք է նշել, որ տարբեր ուսումնասիրողներ տարբեր ձևով են բացատրում կնիքների կրկնությունները։ Օրինակ, Պ. Հարպերը միևնույն կնիքի կրկնությունը նույն կնքադրոշմի վրա պատճառաբանում է առաջին անգամ սեղմելու հետևանքով պատկերի վատ վերարտադրությունով։ Այս երևույթին բոլորովին այլ մոտեցում է ցուցաբերում Վ. Լուկոնինը։ Նա գտնում է, որ այն կնքադրոշմները, որոնց վրա կրկնվում են միևնույն կնիքները, դրանք առևտրական գործարքների հետ են կապված։ Կնքադրոշմների վրա երկու և ավելի միևնույն կնիքների առկայությունը ցույց է տալիս, որ գործարքին մասնակցող անձնավորությունների մի մասը, տվյալ դեպքում արհեստավորը կամ առևտրականը այդ հակում կամ պարկում ուներ մի քանի բաժին՝ նյութական և քանակական առումով։ Հետաքրքիր է նշել, որ Դվինի ամենամեծ կնքադրոշմի վրա, ուր հանդիպում են այդքան շատ կրկնություններ, դրոշմների մի խումբ վերցված է ասեղներով ծածկված կլոր շրջագծի մեջ, ուր փոքր շրջագծով առանձնանում է նաև մեկ խաչապատկեր կնիք։ Ըստ երևույթին, սա ևս կապված է առևտրական կամ նման բնույթի ինչ-որ գործարքի հետ։ Դա միայն կարելի է բացատրել նրանով, որ տվյալ կնիքները կրող անձնավորությունները դուրս են դալիս գործարքից կամ ինչ-որ առավելություններ ունեն, հակառակ դեպքում չէր ընդգծվի նրանց մասնակցության փաստը վավերացման գործում։

Սասանյան կնքադրոշմներին նվիրված ոչ ծավալուն գրականության մեջ կան տարբեր կարծիքներ դրանց կիրառության վերաբերյալ։ Ռ. Գյոբլը, քննարկելով Թախտ-ի Սուլեյմանից գտնված կնքադրոշմները, այն միտքն է հայտնում, որ դրանք կախված են եղել փաստաթղթերից, այսինքն՝ կնքադրոշմներով վավերացված են տարբեր նշանակության փաստաթղթեր, որոնց մեծ մասը տեղական չեն։ Գյոբլը նշում է, որ փաստաթղթերի կարևորությունը բխում է վավերացմանը մասնակցող անձնավորությունների քանակից։ Ռ. Ֆրայը ջատագովն է այն տեսակետի, ըստ որի կնքադրոշմները հիմնականում օգտագործվել են առևտրական գործարքների ժամանակ, այսինքն՝ դրանցով կնքվել են այն ապրանքները, որոնք անցնում էին միջազգային տարանցիկ առևտրով։ Այդ շրջանում տարանցիկ առևտուրը կատարվում էր պետական հովանավորության տակ գտնվող «առևտրական ընկերությունների» միջոցով։ Այս թեզը հիմնականում պաշտպանում է նաև Պ. Հարպերը։ Ռ. Ֆրայը իր տեսակետը շատ հիմնավոր ապացուցում է ինչպես գրավոր վկայություններով, որոնք պահպանվել են սասանյան և հետսասանյան ժամանակաշրջանների առևտրական հարաբերությունների վերաբերյալ, այնպես և բուն կնքադրոշմների արտաքին ֆիզիկական նկարագրով։

Վ. Լուկոնինը ավելի ճիշտ մոտենալով հարցի էությանը, իր բազմաթիվ աշխատանքներում՝ նվիրված սասանյան կնքագիտությանը և Իրանի սոցիալ-տնտեսական հարցերին, այդ փաստաթղթերը, որոնց վրա ամրացված են եղել կնքադրոշմները, համարում է իրավական։ Նա իր թեզը հաստատում է գերազանցապես իրավական աղբյուրների տվյալներով, առաջին հերթին՝ սասանյան դատաստանագրքի և ասորական օրենսգրքի, և լայնորեն օգտագործում է նաև կնիքների վրա հանդիպող արձանագրությունները ու պատկերագրությունը։ Վ. Լուկոնինի տեսակետը չի բացառում կնքադրոշմների կիրառությունը առևտրական գործարքներում։ Ընդհակառակը, նա գտնում է, որ մեծ կնքադրոշմներով կնքվել են առևտրական հակեր, որոնց իրացումից հետո դրանք պահվել են արխիվներում, գործընկերների փայատիրական իրավունքների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով։

Դվինի արշավախմբի պետ Կ. Ղաֆադարյանն իր մի շարք հոդվածներում անդրադարձել է կնքադրոշմների կիրառության հարցերին և հայտնել տարբեր կարծիքներ։ Սակայն հիմնական տեսակետը, որ նա հայտնել է իր վերջին հոդվածներից մեկում, կապվում է Դվինի պետական դիվանի և «Գիրք թղթոց»-ում բերված փաստաթղթերի հետ, որոնք կնքված են եղել երկրի աշխարհիկ և հոգևոր խոշոր գործիչների ու անձնավորությունների կողմից։ Կ. Ղաֆադարյանը շատ ճիշտ կռահել է, որ կնքադրոշմների բազմաթիվ գյուտերը Դվինում խոսում են այն մասին, որ այնտեղ պետք է լիներ մի վայր, կենտրոն կամ արխիվ, ուր կենտրոնացվեր երկրի գրագրությունը։

Այս առումով հիշատակության է արժանի Սեբեոսի վկայությունը Սյունյաց աշխարհի դի-

վանը Դվինից Փայտակարան տեղափոխելու մասին։

Ստ. Մալխասյանը Սեբեոսի վկայության կապակցությամբ շատ դիպուկ նկատում է, որ այստեղ խոսքը գնում է Սյունյաց հարկային դիվանի մասին, քանի որ Փայտակարան քաղաքը մտնում է Ատրպատականի աշխարհամարի մեջ։ Սեբեոսի վկայությունը մտածել է տալիս, որ Դվինի կենտրոնական դիվանում պահվել են տարբեր տիպի փաստաթղթեր, որոնց թվում եղել են նաև պարտավորագրեր, մուրհակներ, հարկերի հավաքման և վճարման արտոնագրեր։

Սասանյան Իրանի հարկային քաղաքականության վերաբերյալ հետաքրքիր վկայություններ են պահպանվել աղբյուրներում։ Իրանում հարկերի հավաքման պետական իրավունքը տրվում էր մասնավոր անձի, որը պարտավորվում էր վճարել պահանջվող գումարը։ Իրանի այս քաղաքականության վերաբերյալ ցայտուն վկայություն է Շապուհ II արքայի բռնած դիրքը պարսկական հպատակության ներքո գտնվող քրիստոնյաների նկատմամբ։ Աղբյուրները նշում են, որ Շապուհ II-ը քրիստոնյաներից պահանջում է վճարել հարկը կրկնակի չափով։

Իրանի այս հարկային քաղաքականությունը կիրառվում էր նաև Հայաստանում։ Այդ մասին վկայում է V դ. պատմիչ Եղիշեն, պարսիկների կողմից երկրում անցկացրած աշխարհագրի կապակցությամբ։

Խոսրով I Անուշիրվանի ներքին ռեֆորմները, որոնք վերաբերում էին նաև հարկային քաղաքականությանը, իր մեջ ընդգրկում էին նաև Հայաստանը, առավելապես VI դ. երկրորդ կեսում, երբ Վարդան (կրտսեր) Մամիկոնյանի ապստամբությունից հետո երկիրը փաստորեն որոշ ժամանակ ընկավ սասանյանների գերիշխանության ներքո։ Սեբեոսն ուղղակի հիշատակում է հարկային գործով զբաղվող պաշտոնյաների, որոնք նշանակված էին Խոսրովի կողմից։ Դրանք կոչվում էին «համարակարներ», զուտ պահլավերեն մի բառ, որը նշանակում է «հաշվարար», «հաշվակալ», այսինքն՝ պետության ելմուտքի գլխավոր պաշտոնյա։ Սեբեոսի վկայությունը «համարակարների» մասին առավել հաստատուն հիմքերի վրա է դրվում, երբ այն համեմատում ենք սասանյան դատաստանագրքի համապատասխան հոդվածների հետ (A—28, 3—5, 93, 4—9 և այլն)։

Դվինը Հայաստանի այն քաղաքներից էր, ուր կենտրոնացվում էին հավաքված տուրքերը, հարկերը և հասույթները։ Գուցե դրան պետք է վերագրել այն հիշատակությունը, որը դարձյալ վերաբերում է Վարդանի 571—572 թվականների ապստամբությանը, երբ «զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքաւն, էին արարեալ համբարանոցս Պարսիկքն, հարին հուր և այրեցին. վասն որոյ եղև նոցա խռովութիւն մեծ»։ Եվ պատահական չէ, որ Վարդանն ու իր համախոհները «առին զաւար բաղում և գնացին ի ծառայութիւն Յունաց»։

Այս բոլոր իրադարձությունները և աղբյուրները վերաբերում են պատմական նույն շրջանին, որն առնչվում էր ինչ-որ ձևով կնքադրոշմների գյուտերի հետ՝ ժամանակագրական առումով։ Ինչո՞ւ չմտածել, որ Դվինում գտնված կնքադրոշմների մի մասը ուղղակիորեն չեն առնչվում հարկային գործի հետ։ Դժվար է դրոշմներով որոշել դրանց պատկանելության հարցը, սակայն դատաստանագրքի այն հոդվածը, որը խոսում է համարակարներին պաշտոնական կնիքներ տալու մասին, ինչ-որ ձևով կարող է կապակցվել կնքադրոշմների որոշ խմբի հետ։

Դվինի սասանյան կնքադրոշմների համեմատությունը Քասր-ի Աբու Նասրի և Թախտ-ի Սուլեյմանի կնքադրոշմների հետ երևան է բերում մի շարք առանձնահատկություններ։ Նախ, Դվինի դրոշմների վրա շատ քիչ են արձանագրությունները (138-ից 20-ի վրա)։ Արձանագրությունների գերակշռող մասը կրոնական կամ աշխարհիկ բնույթի մաղթանքներ են և անուններ, որոնք երբեմն սահմանափակվում են մեկ բառով կամ հատվածով։ Այդ արձանագրությունները դժվարընթեռնելի են և վատ պահպանվածության հետևանքով դրանց վերծանությունը երկար, քրտնաջան աշխատանք է պահանջում։ Դվինի կնքադրոշմների վրա չի հանդիպում և ոչ մի կնիք, որը պատկաներ պարսիկ բարձրաստիճան աշխարհիկ և հոգևոր անձի։ Այլ կերպ ասած, կնքադրոշմներին իսպառ բնորոշ չէ պետական կամ տաճարական գերատեսչություններին պատկանելը, որոնք վերահսկում էին ներքին հարաբերությունների տարբեր բնագավառներ։

Դվինի կնքադրոշմների վրա պատկերված կնիքների գերակշիռ մեծամասնությունը անձնական են։ Դա առաջին հերթին բացատրվում է նաև կենդանական և բուսական պատկերներով, ինչպես նաև չափերով։ Սակայն ընդհանուր խմբից առանձնանում են հինգ կնքադրոշմներ, որոնց վրա կան պաշտոնական կնիքներ։ Դրանցից երեքը իրենց վրա կրում են զուտ արձանագրություններ, որոնցից մեկը հայկական գնդի կնիքով է։ Մյուս երկու կնիքները նշաններ են արձանագրու-

թյուններով և անառարկելիորեն պատկանել են մոգերի, այսինքն՝ դրանցով կնքված են եղել կրոնական կամ դատական բնույթի փաստաթղթեր։

Սասանյան դատաստանագիրքը չի ժխտում այն փաստը, որ մոգերի և դատավորների (դատական գործը մեծ մասամբ դրված էր հոգևորականների վրա) կնիքները պաշտոնական էին։ Հետաքրքիր է, որ Ֆարսի մոգպետի կնիքի վրա փորագրված էր, որ նա հանդես էր գալիս զրկվածների շահերի պաշտպանությամբ կամ անունից։ Ա. Փերիխանյանը նկատել է, որ Փավստոս Բուզանդը Ներսես կաթողիկոսի բնութագիրը տալիս նրան ներկայացրել է որպես «ջատագով ամենայն զրկելոց»։ Փաստն ինքնին հետաքրքիր է նրանով, որ այն դերը ինչ որ խաղում էին մոգպետները Իրանում հոգևոր և դատական գործերում, Հայաստանում այն կատարում էին քրիստոնյա հոգևորականները։ Այստեղից էլ կարելի է համարձակ ասել, որ կնքադրոշմների վրա հանդիպող խաչանշան կնիքները պատկանել են հոգևոր անձանց. և, ամենայն հավանականությամբ, եղել են նույնպես պաշտոնական կնիքներ։ Այս առումով հատկանշական է, որ ոչ քրիստոնեական միջավայրում գտնված կնքադրոշմների վրա, ինչպես գա նկատելի է՝ միջինասիական և պարսկական ժողովածուներում, գրեթե բացակայում են խաչանշան կնիքները, այն դեպքում, երբ նշաններով կնիքները, որոնք մոգպետներին են պատկանում, անխտիր կարգով դրոշմված են մեծ կնքադրոշմների վրա։ Այս երևույթը թույլ է տալիս մտածել, որ Դվինում որպես պաշտոնական անձինք տարբեր ակտերի վավերացման ժամանակ հանդես էին գալիս տեղի հոգևորական գործիչները կամ այն կնքադրոշմները, որոնք, անշուշտ, օտար ծագում ունեն, գալիս են կամ Ասորիքից կամ Իրանի քրիստոնյա շրջաններից։

Դվինի կնքադրոշմներով, անշուշտ, վավերացվել են բազմաբովանդակ փաստաթղթեր, որոնց իսկությունը վերականգնել անհնարին է։ Սակայն այդ կնքադրոշմներով, դրանց արտաքին նշաններով և հետքերով հնարավորություն է ընձեռվում որոշ խմբավորումներ կատարել՝ կապված կիրառության հարցերի հետ։ Այս նպատակով ինչպես Դվինում, այնպես և այլ վայրերում հայտնի կնքադրոշմների մեջ հնարավորություն է տրվում առանձնացնել այն օրինակները, որոնք ստնչվում են առևտրական գործարքների հետ, այսինքն՝ դրանք ապրանքային կնքադրոշմներ են։

Ապրանքային հակերի կնքման վերաբերյալ շատ հետաքրքիր վկայություններ են պահպանվել աղբյուրներում։ XI դ. պատմիչ Իբն ալ-Բալիին նկարագրելով Կազերուն քաղաքում (Ֆարսի նահանգ) հատուկ կտավի պատրաստման եղանակը, մասնավորապես նշում է. «Գոյություն ունեին միջնորդներ, որոնք որոշում էին հագուստների գինը, կնքելով հակերը կնիքներով, նախքան այլ քաղաքների առևտրականներին հանձնելը։ Անցյալներում միջնորդները պատրաստում էին այդպիսի հակերը, իսկ առևտրականները գալիս էին ու գնում դրանք և յուրաքանչյուր քաղաքում, երբ բերում էին այդ ապրանքները, ուղղակի կարդացվում էր միջնորդի վկայագիրը և հակը վաճառվում էր երբեմն առանց բացելու»։

Առևտրական գործարքներում կնքադրոշմների օգտագործման ավանդույթներն այնքան ուժեղ են եղել, որ դրանց վերաբերյալ որոշ տեղեկություններ պահպանվել են նաև արաբական ժողովրդական բանահյուսության մեջ։

Վկայությունները առևտրական նման գործարքների և ապրանքային կնքադրոշմների վերաբերյալ շատ սակավաթիվ են։ Կնքադրոշմների որոշ խմբերի նշանակությունը պարզելու նպատակով շատ կարևոր է քննել Սասանյան Իրանի քաղաքային առևտրի, արհեստների հետ կապված տարբեր հարցեր, առաջին պլանի վրա մղելով արհեստավորական և առևտրական ընկերությունների կատարած դերը այդ խնդրում։

Իրանի առևտրի և արհեստի ներքին կազմակերպչական հարցերի մասին հետաքրքիր վկայություններ ունեն Իշոբոխտի իրավական ժողովածուն և ասորական այլ աղբյուրներ, որոնք մանրամասն քննության է ենթարկել Ն. Պիգուլևսկայան։

Այն, որ Սասանյան Իրանում արհեստավորները համախմբված էին առանձին կազմակերպություններում, այսպես կոչված՝ ցեխերում, փաստագրված են աղբյուրներում։ Արհեստների առանձին ճյուղերը ղեկավարվում են ավագների, գլխավորների կողմից։ Պատահական չպետք է համարել, որ հաճախ հանդիպում են «արծաթագործների ավագ», «ոսկերիչների գլխավոր», կապարի և այլ մետաղների գծով արհեստավորների «ավագ» և այլ արտահայտություններ մի երկրում, որտեղ այդքան բարձր զարգացման էին հասել մետաղների հետ կապված արհեստները։ Բոլոր արհեստավորական ցեխերը և կորպորացիաները ունեին իրենց ներքին կառուցվածքը, իսկ անդամները՝ որոշակի պարտավորություններ։ Նրանք բնակեցված էին քաղաքի որոշակի թաղամասերում, ըստ արհեստների, որոնց աշխա-

տանքը պետության խստիվ հսկողության տակ էր. քաղաքներում այն իրականացվում էր կառավարող մարմնի կողմից։ Շապուհ II-ի ժամանակ հիշատակվող Փուսիկը «արհեստավորների պետ» էր՝ «կարուգբեդ», հատուկ պաշտոն՝ ստեղծված արքունիքին կից։ «Կարուգբեդ» Վարդայաբը հիշատակվում է նաև 544 թ. Նեստորականների ժողովի տակ ստորագրողների թվում։

Առևտուրը նույնպես կատարվում էր ընկերությունների միջոցով։ Իշոբոխտի մոտ մանրամասն տրված է այդ ընկերության կանոնադրությունը։ Սասանյան դատաստանագրքի հոդվածներում բազմիցս հիշատակություն կա առևտրական կազմակերպությունների և ներքին կարգ ու կանոնի վերաբերյալ։ «Hambayih» ընկերությունն իր բնույթով տարբերվում է համայնքից, բայց սեփականության նկատմամբ ունեցած իր վերաբերմունքով ինչ-որ տեղ մոտենում է։ Նրա մեջ մտնում էին փայատերերը, որոնք եկամուտը իրար մեջ բաժանում էին ըստ ներդրումների չափերի։

Իրանի և Հայաստանի տնտեսական ու քաղաքական զարգացումը վաղ միջնադարում ունենալով ընդհանուր գծեր, գնում էր տարբեր ուղղություններով։ Այստեղ կարելի է միայն նշել, որ Սասանյան Իրանը կենտրոնացված ուժեղ պետություն էր, պետական կառավարչական հզոր ցանցով։ Պետության հիմքերից մեկը կազմում էին խոշոր քաղաքները, աշխույժ առևտրով և զարգացած արհեստներով։

Հայաստանում երկրի անկախությունը փոխարինված էր նախարարների իրավական իշխանության ճանաչմամբ։ Արհեստները և առևտուրը թուլացել էին, որն արագացնում էր անցումը բնատնտեսությանը։

Գաղափարական երկարատև պայքարը Իրանի և Հայաստանի միջև որոշ չափով վերջինիս զերծ պահեց մշակութային տարբեր բնագավառներում իրանական ազդեցությունից։ Այնուհանդերձ այդ ազդեցությունները կան, նկատելի են հատկապես արվեստում և ավագանու կենցաղում։ Սասանյան վարչական և տնտեսական գործունեության ազդեցությունը Հայաստանում նույնպես զգալի էր։

Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտրի կենտրոններից էր։ Արտաշատը չէր կորցրել իր դերը այդ առևտրում։ Դրա մասին շատ հստակ է գրված Հուստինիանոսի 408/9 թ. կայսերական կոդեքսում։ 428 թ. հետո, երբ երկրի քաղաքական կենտրոնը տեղափոխվում է Դվին, հույն և հռոմեացի աշխարհագիրների մոտ ավանդաբար Դվինի փոխարեն դեռ հիշատակվում էր Արտաշատը։ Արտաշատը արաբների օրոք հիշվում է որպես Դվինի արվարձան։ Բալաձորին այն անվանում է «ներկարարների քաղաք» (al-Qirmiz)։ Սասանյանների օրոք Հայաստանում և Անդրկովկասում կատարվող առևտրի վերաբերյալ որոշ տվյալներ են պահպանվել։ Առևտրականների ուղիների մասին բավականին հստակ են «Պատինգերյան քարտեզում» նշված ճանապարհները և հանգրվանները։

VI դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին գրում է տարբեր երկրներից Դվին ժամանած առևտրականների մասին, որոնք ապրանքների լայն փոխանակություն էին կատարում։ Առևտրական ուղիների և հենակետերի վերաբերյալ հետաքրքիր խնդիր է առաջադրված Անանիա Շիրակացու կողմից, որտեղ վերջինս վկայում է, Բակտրիայից Կասպից ծովի հարավային ափերով դեպի Անդրկովկաս եկող առևտրական մի կարևոր ուղու մասին։ Հետաքրքիր է, որ այդ ճանապարհի վրա հիշատակված են Դանձակը (նույն Թաիտ-ի Սուլեյմանը) և Դվինը՝ կենտրոններ, որտեղից գտնվել են ապրանքային կնքադրոշմներ։

Մեզ համար կարևոր արժեք է ներկայացնում «Գիրք Թղթոց»-ում բերվող վկայությունն այն մասին, որ նեստորականները Խուզիստանից (Խուժաստան) գալիս բնակվում են Հայաստանում և զբաղվում առևտրով։

Հայաստանի և մասնավորապես Դվինի արտաքին առևտրի վերաբերյալ բազմաթիվ նյութեր կան հնագիտական պեղումներից։ Դրանց թվում կարելի է դասել Միջագետքից և Ասորիքից ներմուծված ապակե անոթները, փոքրասիական ծագում ունեցող կավե սրվակը՝ ս. Անդրեասի պատկերով, Նոր Բայազետի արծաթե թասերի հայտնի գանձը, սասանյան և բյուզանդական դրամները և այլն։

Վաղ միջնադարյան Հայաստանի ներքին առևտրի վերաբերյալ տեղեկությունները անհամեմատ քիչ են։ Դրանք հիմնականում տեղ են գտել եկեղեցական կանոններում։ Աղբյուրներից երևում է, որ հայկական կենտրոններում, հատկապես Դվինում օտար առևտրականների կողմից ստեղծված էին համայնքներ, որոնք գտնվում էին պետական հսկողության տակ և միաժամանակ ներկայացնում էին իրենց առևտրական հաստատությունները («ընկերություններ»)։ Պատահական չէր հենց նեստորականների մուտքը Հայաստան առևտրական նպատակներով։ Նեստորականները մեծ դեր էին կատարում Իրանի առև-

արում և հովանավորվում էին արքաների կողմից։

Նեստորականների առաջին խմբերը ներթափանցում են Հայաստան V դ. վերջում։ VI դ. կեսերին նեստորականների համայնքը այնքան է մեծանում, որ իր համար կառուցում է հատուկ եկեղեցի Գրիգոր Մանաճիհր Դաժիկի անունով։ Մեզ համար կարևոր է այն հանգամանքը, որ նեստորականները Հայաստան են տեղափոխվում Խուզիստանից, որը, Սասանյան Իրանի առևտրական և արհեստավորական խոշոր կենտրոններից էր։ Վերաբնակեցման գործում նրանց հովանավորում էր պարսից արքունիքը, ըստ երևույթին, որոշակի քաղաքական և տնտեսական նկատառումներով։ Մեզ թվում է ուղղակի կապ կա նեստորականների մուտքի և ալ-Համադանու վկայության միջև Դվին քաղաքի պաշտպանության և առևտրի ծավալման հարցում Խոսրով I Անուշիրվանի շինարարական գործունեության մասին, երբ նա բնակեցրեց և ամրացրեց այն։

Նեստորականների կատարած լայն առևտրի մասին են վկայում Դվինից և Խուզիստանին անմիջապես մոտ գտնվող Քասր-ի-Աբու Նասր բնակավայրից գտնված.կնքադրոշմները։ Այդ անմիջական կապերը արտահայտված են միևնույն կնիքների առկայությամբ՝ երկու բնակավայրերից հայտնի կնքադրոշմների վրա։ Կրկնվող կնիքները չորսն են։ Դրանցից մեկը պաշտոնական կնիք է, որը պատկանել է ինչ-որ գրասենյակի, գուցե և առևտրական «ընկերությանը», կրում է արձանագրության մի հատված։ Մյուս երեքը անձնական բնույթի կնիքներ են։ Դվինի այս կնիքները հանդիպում են միայն ապրանքային կնքադրոշմների վրա, որտեղ պարզորոշ նկատելի են լայն փոկեր և պարկերի հետքեր։

Դվինում դրանք հանդիպում են մեկական օրինակներով, գրեթե նույն պատկերը կրկնվում է նաև Քասր-ի Աբու Նասրում, բացառությամբ մեկի (D—363), որը դրոշմված է հինգ տարբեր կնքադրոշմների վրա։ Կնիքների համեմատությամբ կարելի է որոշակի նշել, թե Քասր-ի Աբու Նասրում որոնք են եղել ապրանքային կնքադրոշմները։ Որոշ դրոշմներ կրկնվում են նաև Դվինի և Թախտ-ի Սուլեյմանի կնքադրոշմների վրա, որոնք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում։ Դրանցից մեկը հանդիպում է միաժամանակ և Քասր-ի Աբու Նասրում։

Կնիքների կրկնությունները տարբեր հուշարձաններում հնարավորություն չեն ընձեռում պարզել դրանց ծագման և տեղայնացման հարցերը։ Կարելի է ենթադրել, որ բազմակնիք մեծ կնքադրոշմները, որոնք գտնվել են Դվինում, ծագում են Քասր-ի Աբու Նասրից և ընդհակառակը, իսկ մեկ կնիքով կնքադրոշմներով վավերացված են եղել անհատական բնույթի նամակներ կամ հավատարմագրեր՝ ուղղված երկու բնակավայրերի առևտրական միջնորդներին։

Բացառված չէ այն հանգամանքը, որ հակերը կնքող կնքադրոշմները վերադարձվել են իրենց արտահանման վայրը և որպես փաստաթուղթ վերջնական հաշիվներ կատարելու համար պահվել են հատուկ տեղում։

Դվինում իրենց առևտրական համայնքներն են ունեցել հավանաբար ասորիները, որոնք մեր թվականության առաջին յոթ հարյուրամյակներում և դրանից առաջ համարվում էին Միջերկրական ծովի և Մերձավոր արևելքի առաջավոր առևտրական ժողովուրդներից։ Ասորիների աղերսը Հայաստանի հետ ունի շատ խոր արմատներ՝ սկսած Տիգրան Մեծի ժամանակաշրջանից։ Հետագա շրջանում ասորիները բնակություն են հաստատում երկրի արհեստավորական-առևտրական կենտրոններում, որոնց մեջ գլխավոր դերը պատկանում էր Դվինին։ Ասորի առևտրականների գոյության փաստը ապացուցվում է նաև կնքադրոշմներով, որոնց վրա հանդիպում են կնիքներ՝ ձևով և պատկերագրությամբ առնչվող ասորական խմբին։

Հայաստանի արտաքին և ներքին առևտրում անշուշտ խոշոր դեր էին կատարում հայ վաճառականները, չնայած ուղղակի վկայություններ դրա մասին բացակայում են։ Սակայն այն փաստերը, որ մենք ունենք վաճառականների մասին, համենայն դեպս նշում են նրանց արտոնյալ վիճակը և երկրի տնտեսությունում կատարած դերը։

Առևտրական առանձին դասերի, խմբերի առկայության փաստը Հայաստանում հաստատում են Դվինում գտնված կնքադրոշմները։ Բազմակնիք ապրանքային կնքադրոշմներով վավերացված ապրանքներով առևտուր կարող էին իրականացնել միայն առևտրական ընկերությունները և ոչ թե առանձին անհատներ։ Դա պարզ է դառնում նաև, երբ ուշադիր հետևում ենք տարբեր կնիքների վրա միևնույն կնիքի մի քանի անգամ հանդիպելուն։

Դվինում գտնվել են արաբական շրջանին վերաբերող երեք կնքադրոշմներ, որոնք առայժմ միակն են և հայտնի չեն Արևելքի և ոչ մի հուշարձանից։ Դվինի կնքադրոշմները դրեթե բոլորն ունեն արձանագրություններ, որոնք անուններ են կամ մաղթանքներ։ Արձանագրությունների վատ

պահպանվածությունը հնարավորություն չի ընձեռում ավելի խոր հետևություններ անել։

Ձնայած կնքադրոշմները գտնվել են Դվինի IX դ. շերտում, այնուհանդերձ կնիքների պատկերագրությունը և արձանագրությունները թույլ են տալիս ասելու, որ դրանք թվագրվում են VII—VIII դդ., իսկ կնքադրոշմներից մեկն իր վրա կրում է նաև սասանյան կնիքների արտատպություններ։ Այս երևույթը հետաքրքիր է պարսկա-արաբական առևտրական փոխհարաբերությունների պարզման նպատակով նախնական շրջանում։ Ըստ երևույթին, արաբները սկզբնական շրջանում որոշ արտոնություններ են տվել հայ և պարսիկ առևտրականներին իրենց գործունեության ասպարեզում։ Այդ տեսակետից շատ հիշարժան է Հաբիբ իբն Մասլամայի պայմանագիրը Դվինի բնակչության հետ, որը հիշատակում է Բալաձորին։

Ռ. Ֆրայը նշում է, որ արաբները (հատկապես Օմայանների և Աբասյանների ժամանակ) պահպանեցին սասանյան վարչական ապարատի որոշ ինստիտուտներ, գործում էր հարկային նույն սիստեմը, շրջանառության մեջ էին սասանյան դրամները։ Ըստ երևույթին առևտրական հարաբերությունների մեջ էլ շատ բան պահպանվեց սասանյաններից, որը հետագայում լայն ծավալ ստացավ։

Դվինը արաբական և հետարաբական շրջանում չի կորցնում իր առևտրական նշանակությունը։ Այդ մասին բազմաթիվ վկայություններ են պահպանել արաբ աշխարհագիր ալ-Իստահրին, ալ-Յակուբին, ալ-Մուկադասին, Իբն Հաուկալը և ուրիշներ։

Դվինի արաբական կնքադրոշմները ապրանքային են և կապված առևտրական գործարքների հետ։ Ըստ էության դրանք իրենց արտաքին ձևերում չեն տարբերվում սասանյաններից, միայն այստեղ կնիքների գերակշիռ մեծամասնությունը կրում է արձանագրություններ (40-ից 25-ը), զուտ պատկերներ ունեն միայն հինգ կնիք։ Որոշել, թե դրանցից որոնք են պաշտոնական կնիքներ, դժվար է, բացի խաչանշան մեկ կնիքից։

Դվինում գտնված կնքադրոշմների վրա հանդիպող կերպարները, անկախ գտնվելու վայրից, սերտորեն առնչվում են սասանյան նույնատիպ հուշարձանների հետ։ Իհարկե, այդ կնիքների մեծ մասը, որոնցով կատարվել են վավերացումները, սասանյան արվեստի արգասիք են։ Պատահական չպետք է համարել այն փաստը, որ կնիքների մի մասը, ըստ երևույթին, պատկանել է տեղի բարձրաստիճան անձանց և իրենց կոմպոզիցիաներով խիստ մոտենում են սասանյան միշավայրում ստեղծված կնիքների կոմպոզիցիաներին։ Հավանական է, որ առավելապես այդ կնիքների սիմվոլիկան համընկնում է բուն սասանյան կնիքների սիմվոլիկայի հետ։ Դա մի երևույթ է, որը պետք է պարտադիր լիներ ելնելով ժամանակի ոգուց և կապվում էր պարսկական ազդեցության տարածման արեալի հետ։

Կնքադրոշմների վրա հանդիպող բոլոր կենդանիները և թռչունները այս կամ այն չափով կապվում են տոտեմական պաշտամունքի, դիցաբանության և կոսմոգոնիական հասկացությունների հետ։ Նրանց մի մասը համաստեղություններ են կամ աստղերի սիմվոլներ և տեղ են գտել Զոդիակում։

Դվինի կնքադրոշմները ըստ պատկերագրության և սյուժեների դասակարգված են հետևյալ խմբերում։

Մարդկանց պատկերներ. Ժողովածուում շատ սակավ են հանդիպում մարդկանց պատկերներով կնիքները։ Այս հանգամանքը մի անգամ ևս ցույց է տալիս, որ Դվինի կնքադրոշմները կնքվել են տեղական ներկայացուցիչների կողմից և հավանաբար տվյալ փաստաթղթերի կազմման արարողությանը չեն մասնակցել սասանյան արքունիքին մոտ կանգնած բարձրաստիճան անձնավորություններ կամ նահանգապետներ, որոնց կնիքները կրում էին մարդկանց դիմապատկերներ անձի, պաշտոնի և այլ ատրիբուտների հավաստող արձանագրության հետ մեկտեղ։

Կենդանիների պատկերներ. Դվինի կնքադրոշմների վրա բազմաթիվ են կենդանիների պատկերները առանձին և տարբեր վարիացիաներով։ Հանդիպում են՝ առյուծ, գայլ, խոյ, քարայծ, վարազ, արշ, եղջերու, մուկ։

Առյուծի պատկերով դրոշմներ մեր ժողովածուում հանդիպում են 3 անգամ, երկուսը՝ VI—VII դդ. նյութերում, իսկ մեկը՝ IX դ. կնքադրոշմի վրա։ Դրոշմներից մեկի վրա պատկերված է ծառի հովանու ներքո պառկած առյուծ, թավ բաշով, որի գլուխը հանգչում է առջևի թաթերի վրա։ Քասր-ի Աբու Նասրի կնքադրոշմների վրա նման դիրքով առյուծների կնիքները բազմաթիվ են։

Տոտեմական պաշտամունքում իրենց ուրույն տեղն ունեին գայլ, շուն էակները։ Շունը հանդես է գալիս որպես հավատարմության մարմնավորում, որը հնուց ի վեր ծառայել է մարդուն։ Պատահական չպետք է համարել, որ հնուց եկող այս պաշտամունքը ավանդաբար անցել է նաև քրիստոնեական իրականության մեջ և իրենց արտացոլումն են գտել նաև դեկորատիվ և կիրառական ար-

վեստներում։ Դվինի կնքադրոշմների վրա այդ պատկերները հանդիպում են չորս անգամ (ավելի շատ, քան մյուս կենդանիները)։

Հաճախ են հանդիպում խոյերի, քարայծերի և եղջերուների պատկերները։ Ընդհանուր պատկերագրական ոճով դրանք նման են Քասր-ի Աբու Նասրի նույնատիպ օրինակներին։ Դրանք բոլորը անձնական բնույթի կնիքներ են և զուրկ են արձանագրություններից։ Խոյերն ունեն ժապավեններ, որոնք հաշողության և արքայական մեծարման աստծու՝ Խվարենայի սիմվոլն են։ Դվինի կնքադրոշմների մեջ հազվադեպ են վարազի և մրլյան պատկերով կնիքները։ Կնիքներից մեկի վրա պատկերված է արջի գլուխը աստղային նշանով, որը հազվագյուտ է հանդիպում սասանյան կընիքների վրա։ Կարիճի պատկերով կնիքները չորսն են, որոնցից երկուսը՝ թռչունի հետ, մեկը՝ լուսնի, իսկ մեկը՝ առանձին։

Թռչուններ. Դվինի կնքադրոշմների վրա հանդիպող պատկերների մեծամասնությունը թռչուններ են, գերազանցապես աղավնի, արագիլ, աքաղաղ, փասիան, արծիվ-անգղ, սիրամարգ, կարապ բադ և այլն։ Նրանք հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես և այլ կենդանիների հետ (օձերի, կարիճների և եղջերուի)։ Դրոշմներից 10-ում թռչունները հանդես են գալիս երկնային լուսատուների, մասնավորապես կիսալուսնի հետ։ Թռչունների այս խումբը լայն տարածում ունի ուշ սասանյան գլիպտիկայում։ Պատկերագրական տեսակետից որոշակի նմանություններ կան մասնավորապես Դվինի, Քասր-ի Աբու Նասրի և Թախտ-ի Սուլեյմանի կնքադրոշմների միջև, որը խոսում է դրանց միևնույն միջավայրում ստեղծվելու մասին։ Կնքադրոշմների այս սյուժեները սերտորեն առնչվում են պաշտամունքի հետ և, հատկապես, դրանք պարզորոշ երևան են գալիս դրադաշտական կրոնական տեքստերում։ Թռչունների այս խումբը գերազանցորեն կապվում է երկնային պաշտամունքի հետ, խորհրդանշելով հոգու անմահության գաղափար։

Հայ իրականության մեջ նույնպես մեծ տեղ է հատկացվել թռչունների պաշտամունքին հնուց մինչև մեր օրերը։ Այդ են վկայում հնագիտական բազմաթիվ առարկաները և ազգագրական նյութերը։ Վաղ միջնադարյան քանդակներին նվիրված իր հատուկ ուսումնասիրության մեջ Բ. Առաքելյանը մանրակրկիտ քննարկման է ենթարկել թռչունների հետ կապված առասպելական և սիմվոլիկ պատկերացումները։

Բուսական պատկերներ. Ի տարբերություն Քասր-ի Աբու Նասրի կնքադրոշմների, Դվինում շատ քիչ են բուսական պատկերներով դրոշմները։ Դրանց մեջ կարելի է հիշատակել ասորական ծագում ունեցող դրոշմը արմավենու պատկերով, խազողի տերևի նմանությամբ դրոշմները և ոճավորված ծառերը՝ ընդամենը 7 հատ։ Վաղ սասանյան կնիքների վրա շատ հազվադեպ են հանդիպում բուսական պատկերները։ Վ. Լուկոնինը գտնում է, որ դրանք կապված են Անահիտի պաշտամունքի հետ, նրա սիմվոլներն են (տարբեր ծաղիկներ, նռան պտուղը և այլն), որը Իրանում տարածվում է IV դարում։ Վաղ միջնադարյան հայկական արվեստում սկզբնական շրջանում բուսական մոտիվները բավականին զուսպ են հանդես գալիս և ավելի ոճավորված են, ինչպես դա նկատելի է Աղցի դամբարանում և Քասաղի բազիլիկայում։ VI—VII դդ. բուսական մոտիվը լայն տարածում է ստանում և վերարտադրվում ավելի իրական գծերով։

Ֆանտաստիկ էակներ. Այս խմբի մեջ եղած դրոշմները չնայած քիչ են, բայց բաժանվում են երկու մասի։ Առաջին տիպի կնիքները, որոնց վրա պատկերված են Գոպատշահը և թևավոր ձին, անշուշտ սասանյան ծագում ունեն։ Երկու մոտիվներն էլ բազմիցս հանդիպում են սասանյան կնիքների և կնքադրոշմների վրա։ Գոպատշահը հաճախ է հանդիպում պարսկական գրավոր հուշարձաններում ու բարձրաքանդակներում։ Ցուլ-մարդու այս կերպարը, որը Առաջավոր Ասիայի ժողովուրդների տոտեմական պատկերացումների արդյունք է, հին պարսկական արվեստի մեջ մտել է դեռևս աքեմենյան ժամանակաշրջանում։ Գոպատշահը հավանաբար կապվում է ջրի պաշտպանության և ոռոգման հետ։ Խնդրի մանրամասն քննարկումը կատարել է Կ. Վ. Տրևերը։

Երկրորդ տիպի կնիքները ստեղծվել են քրիստոնեական միջավայրում։ Ընդ որում դրանք երկուսն են՝ ճյուղը ձեռքին ամուրի և զույգ ամուրների պատկերով։ Սասանյան կնիքներում այս պատկերները շատ հազվագյուտ են։ Քասր-ի Աբու Նասրում կա զույգ ամուրներով դրոշմի մեկ օրինակ։ Դրանք իրենց թեմատիկայով շատ են մոտենում ուշ հռոմեական կնիքներին։

Սիմվոլներ, նշաններ, ինֆնագրեր. Դվինի կնքադրոշմների մեջ իրենց ուրույն տեղն ունեն քրիստոնեական և զրադաշտական սիմվոլներով դրոշմները։ Խաչի պատկերով կնիքները հանդիպում են յոթ անգամ։ Կնիքների վրա հանդիպող խաչը չի կարող դիտվել որպես լոկ հասարակ զարդ։ Մենք այստեղ տեսնում ենք որոշակի նշան, որը հավաստում է կնիքի տիրոջ քրիստոնյա լինելը։ Երբեմն հանդիպում են զրադաշ-

տականության միջավայրում ստեղծված և հետագայում քրիստոնեաների ձեռքը անցած կնիքներ, որոնք լրացուցիչ փորագրել են տվել խաչի նշան։

Խաչերով սասանյան կնիքներ քիչ են հայտնի։ Անդրկովկասում դրանք հազվադեպ են։ Պետական էրմիտաժի հավաքածուում մեղ հայտնի է առայժմ մեկ օրինակ, որը թվագրվում է IV—V դարերով։ Քասր-ի Աբու Նասրում, որտեղ բացառված չէ նեստորականների մասնակցությունը ապրանքային կնքադրոշմների վավերացմանը, նույնպես հայտնի են դրոշմներ, որոնք կարելի է համարել խաչանշան, թեև որոշ ոճական տարբերություններ նկատելի են։

Կնիքների վրա հանդիպող նշանների վերաբերյալ ուսումնասիրողների կողմից բազմաթիվ կարծիքներ են հայտնվել։ Նշանների առեղծվածը լուծելու ձգտումն ինքնըստինքյան հասկանալի է, քանի որ դրանք մեծ քանակությամբ պատկերված են կնիքների, դրամների, խեցեղեն անոթների և մասնավորապես արծաթե սպասքի վրա։ Սակայն ինչքան էլ կարծիքները շատ են, բայց մինչև օրս վերջնական լուծման չեն հանգել։

Դվինի կնքադրոշմների մեջ նշանները հանդիպում են երեք անգամ, որոնցից երկուսը՝ առանձին։ Որպես պարտադիր կանոն, բոլոր նշաններով կնիքներն ունեն արձանագրություն։ Բազմակնիք կնքադրոշմների վրա նշանով դրոշմներ չեն հանդիպում։ Անհատական, առանձին կնիքները կարող էին պատկանել մոգերին, որոնք, ինչպես հայտնի է, վարել են դատական և այլ տիպի գործեր և հավանաբար կնքել են համապատասխան փաստաթղթեր։

Դվինի ժողովածուում հայտնի են նաև 3 ինքնագրեր, որոնցից մեկը 45 դրոշմով կնքադրոշմի վրա։ Հավանական է, որ դրանք լինեն կնիքների տերերի անունների տառերը, որոնք իրոք ոճավորված են։